

ԵԹՈՎՄԻՈՅ ՆՈՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ

Եթովպահան Աւղագիտառ Միաբնակ Եւկեղիցին սկիզբի օրէն ի վեր ի հոգեսրս և ի վարչականս հնմակայ եղած է Աղեքսանդրիոյ Դպտի Պատրիարքութեան Եթովպահան եպիսկոպոսներ ձեռնազրութիւն կը ստանային Դպտոց Պատրիարքէն:

Վերջին ամիսներու ընթացքին, յիտ խորհրդակցութեանց և տարակարձութեանց, Եթովպահան Եկեղեցին համաձայնուրար Դպտի Պատրիարքութեան հետ, ունեցաւ իր վարչական անկախութիւնը, մինոյն ժամանակ պահելով ի հոգեսրս հնմականութիւնը Աղեքսանդրիոյ Աթոռին:

Բարեբախտութիւն մը եղաւ Աղեքսանդրիոյ Աթոռին համար բաւական երկար անորոշութենէ և տագնապէ ետք ունենալ նորընտիր գահակալ մը: Նոյնքան ուրախալի պարագայ մը եղաւ նաև Եթովպահոյ կայսրութեան այս ծաղկեալ չրջանին մէջ, Եթովպահան քոյր Եկեղեցւոյ վարչական անկախութիւնն ու ինքնազլուխութիւնը, օժուժով նորապատկ Կաթողիկոս Ապունա Պասիլիոսի:

1959 Յունիոի 28ին, Աղեքսանդրիոյ Դպտի Պատրիարքութեան Մայր Տաճարին մէջ ի Գահիրէ, ի ներկայութեան Եթովպահոյ վեհ. Կայսեր՝ Հայէ Անդամական Եթովպահան Եկեղեցւոյ պետ Ապունա Պասիլիոս ստացաւ Կաթողիկոսական ձեռնազրութիւն՝ ձեռամբ Դպտոց նորընտիր Պատրիարքին: Ի շարս այլ հրաւիրեալներու, Հայ Եկեղեցին կը ներկայացնէր Եղիպատահայոց Առաջնորդ Գերշ. Տ. Մամբրէ Արքեպոս. Արքունեանը, օրպէս ներկայացուցելիչը մինոյն ժամանակ Արքեղեան Միաբնակ Եկեղեցիներու հնագոյնին և զլիսաւորին:

Ամենապատիւ Պասիլիոս Կաթողիկոսը Ատափս-Ապալա վերադարձաւ Յուլիս 11ին Մայրաքաղաքի օդակայանին մէջ կազմակերպուած էր պետական մեծաշուք յիմաւորութիւն՝ ի ներկայութեան Ն. Կ. Վ. Եթովպահոյ Կայսրուհին, Գահաժառանգ Իշխանին, պետական անձնք և եպիսկոպոսներ. հայ զաղութէն ներկայ էր Տ. Զաւէն Վարդապետ: Նոյն օրը առաւտեան ժամը 10.30ին, Հայոց Ա. Գէօրգ Եկեղեցւոյ մէջ, ի ժամ Ա. Պատարագի, ծանուցուեցաւ հայ զաղութէն մեր քոյր Եկեղեցւոյ իմաստուն Կաթողիկոսով մը օժտուած ըլլալու պարագան: Արքատագին մաղթանքներ եղան որ Եթովպահան Եկեղեցին, ըլլալով այլես ի վարչական անկախ և ինքնազլուխ Եկեղեցին մը, ունենայ իր գործունէութեան բարգաւաճ չրջանը՝ Եթովպահան բարեխնամ Կառավարութեան կողքին:

Եթովպահայ Գաղութի Հոգիւ Հոգէ. Տ. Զաւէն Վարդ. Արքումանեան: Թնդանօթի 21 հարուածներ աւետեցին Կաթողիկոսի ժամանումը և պետական նուազախումբը նուազով զիմաւորեց զայն: Կաթողիկոսին կ'ընկերանային Երուսաղէմի Հապէշաց Եպիսկոպոս Գերշ. Տ. Ֆիլիպրոս Արքան և Հարարի Եպիսկոպոս Գերշ. Տ. Թէոփիլոս Արքազան:

Դիմաւորութեան եկող բազմութեան ինքնաշարժերու թափօրը, գլխաւորութեամբ Գահաժառանգ Իշխանի ինքնաշարժին, ուրուն մէջ նստած էին Իշխանն ու Պատրիարքը, ուղղուեցաւ Կայսերական Պալատ՝ ուր ընդունելութիւն մը սարքած էր Եթովպահոյ Վեհ. Կայսրուհին: Պալատին մէջ խօսք առաւ Պատրիարքը և տեղի ունեցաւ պատուասիրութիւն: Ներկաներուն մէջ հայ զաղութը կը ներկայացնէր Հոգեոր Հոգիւ Տ. Զաւէն Վարդ. Արքումանեան: Համաձայն նսխապէս եղած հրաւէրի, նոյն խումբը յառաջացաւ գէպի Եթովպահան Եկեղեցւոյ Կաթողիկոսարանը: Հոս ընդունելութեան կը նախագահէր Եթովպահոյ Գահաժառանգ Իշխանը. յիտ պատուասիրութեան եղան ուղերձներու ընթերցում և չնորհաւորութիւններ:

Կիրակի, Յուլիոի 12ին, Տ. Պասիլիոս Կաթողիկոսը Ա. Պատարագ ժամոյց մայրաքաղաքին Ա. Երրորդութիւն Մայր Տաճարին մէջ. ներկայ էին Եթովպահոյ Կայսրուհին, Գահաժառանգ Իշխանը, պալատական անձնք և եպիսկոպոսներ. հայ զաղութէն ներկայ էր Տ. Զաւէն Վարդապետ: Նոյն օրը առաւտեան ժամը 10.30ին, Հայոց Ա. Գէօրգ Եկեղեցւոյ մէջ, ի ժամ Ա. Պատարագի, ծանուցուեցաւ հայ զաղութէն մեր քոյր Եկեղեցւոյ իմաստուն Կաթողիկոսով մը օժտուած ըլլալու պարագան: Արքատագին մաղթանքներ եղան որ Եթովպահան Եկեղեցին, ըլլալով այլես ի վարչական անկախ և ինքնազլուխ Եկեղեցին մը, ունենայ իր գործունէութեան բարգաւաճ չրջանը՝ Եթովպահան բարեխնամ Կառավարութեան կողքին:

ԶՍԻԷՆ Վ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

Ասիս - Ապագա